Հաստատում եմ:
Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի ռեկտոր՝
[illegible] Միրզախանյան
16.04.2021թ.

ԿԱՐԾԻՔ

Գևորգ Պարգևի Նազարյանի՝ ««Միացյալ Հայաստանի» հայկական, ամերիկյան ու բրիտանական նախագծերը Փարիզի խաղաղության վեհաժողովում եվ դրանց շուրջ տեղի ունեցած զարգացումները» (է. 00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ) պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

2021 թ. ապրիլի 16-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի նիստը, որին մասնակցում էին ամբիոնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Փիլիպոսյանը, պատմ. գիտ. դոկտորներ, պրոֆեսորներ Վ. Վիրաբյանը, Ս, Պողոսյանը, Խ. Ստեփանյանը, պատմ.գիտ. թեկնածուներ, պրոֆեսորներ Է. Գևորգյանը, Ա. Հարությունյանը, պատմ. գիտ. թեկնածուներ, դոցենտներ Է. Հովհաննիսյանը, Ֆ. Մայիլյանը, Ա. Եփրիկյանը, Է. Մելքոնյանը, Մ. Եղյանը, Ս. Խաչատրյանը:

Քննարկվեց Գեվորգ Պարգեվի Նազարյանի՝ ««Միացյալ Հայաստանի» հայկական, ամերիկյան ու բրիտանական նախագծերը Փարիզի խաղաղության վեհաժողովում եվ դրանց շուրջ տեղի ունեցած զարգացումները» թեկնածուական ատենախոսությունը՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար:

Ելույթ ունեցան ատենախոսության գրախոսներ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Խ. Ստեփանյանը, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆ. Ա. Հարությունյանը, ովքեր հրապարակեցին իրենց գրավոր կարծիքները:

Պատասխան ելույթով հանդես եկավ ատենախոս Գ. Նազարյանը:

Պատմաբան Գևորգ Պարգևի Նազարյանի՝ ««Միացյալ Հայաստանի» հայկական, ամերիկյան ու բրիտանական նախագծերը Փարիզի խաղաղության վեհաժողովում և դրանց

շուրջ տեղի ունեցած զարգացումները» պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացվող ատենախոսությունը վերաբերում է Հայաստանի Հանրապետության կայացման և ցեղասպանություն ապրած հայ ժողովրդի հետագա ճակատագրի ամենակենսական դրվագներից մեկին, երկրի ամբողջականության վերականգնման նպատակով Հայաստանի երկու հատվածների միավորմամբ Միացյալ և Անկախ Հայաստան ստեղծելու խնդրին:

Հայոց պատմության նոր և նորագույն ժամանակահատվածի պատմության բազմաթիվ առանցքային հիմնախնդիրների, այդ թվում՝ հայկական հարցի և, մասնավորապես, Փարիզի խաղաղության վեհաժողովի լուսաբանման առիթով, առաջին հայացքից այն մտայնությունը կա, թե նախորդած տասնամյակներում հայ և օտարազգի վաստակաշատ գիտնականների ու մտավորականների մի քանի սերնդի կողմից ամեն ինչ վաղուց հիմնովին վերհանվել, ուսումնասիրվել ու մեկնաբանվել է: Ժամանակի ընթացքում հրապարակ են իջել հիմնարար մենագրություններ, հոդվածներ ու հրապարակումներ և, ըստ այդմ, հիմնախնդիրը փաստագրական նյութի հագեցվածության առումով լիովին յուրացվել է՝ կորցնելով իր պատմագիտական կարևորությունը:

Մինչդեռ, հենց ներկայացված սույն ատենախոսության օրինակով կարելի է հաստատագրել, որ պատմական գիտության հետազոտական դաշտն իրոք անսպառ է և, պարբերաբար, կարող են ի հայտ գալ նոր տվյալներ, պարտադրելով «սպառված» թեմաներն այլ դիտանկյունից նորովի քննարկելու, մեկնաբանելու և այլ դիտանկյունից նոր բացահայտումներ կատարելու համար:

Այդ առումով խիստ գնահատելի և շնորհաշատ աշխատանք է կատարել Գևորգ Նազարյանն՝ իր գիտական ղեկավարի՝ պրոֆ. Աշոտ Հայրունու օժանդակությամբ:

Ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից ու հավելվածից (194 էջ) բաղկացած ատենախոսության շրջանակներում հեղինակը փորձել է վեր հանել և ներկայացնել թեմային առնչվող բազում խնդիրներ, այդ թվում՝ հայկական երկու պատվիրակությունների գործունեությունը Փարիզի խաղաղության վեհաժողովում «Միացյալ Հայաստանի» ստեղծման ուղղությամբ, «Միացյալ Հայաստանի» ստեղծման բրիտանական ու ամերիկյան (Քինգ Քրեյնի և Հարբորդի հանձնաժողովների) նախագծերը և «Միացյալ Հայաստանի» ձախողման հիմնական պատճառները, որն իր մեջ ներառում է դաշնակից պետությունների արտաքին քաղաքական

հակասությունները և թուրքական կողմի բացահայտ ապակառուցողական, խոչընդոտող ջանքերը:

Չխորանալով ատենախոսության բովանդակության մանրամասնությունների մեջ, նշենք միայն, որ ատենախոսության գիտական նորույթը և ամենամեծ արժանիքն այն է, որ հեղինակը կարողացել է հավաքել, համակարգել և առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնել իր կողմից հայտնաբերված ամերիկյան և անգլիական արխիվային նոր վավերագրեր, որոնք թարմ լույս են սփռում թեմայի ուսումնասիրման համար և ատենախոսությանը հաղորդում էլ ավելի խորքային և գիտական բնույթ:

Ատենախոսության մյուս կարևոր ներդրումն այն է, որ հեղինակն ամենևին էլ չի փորձել զբաղվել Հայաստանի նկատմամբ եվրոպական երկրների որդեգրած քաղաքականության սոսկ գովերգմամբ: Նա կարողացել է իր քննադատական մոտեցմամբ հմտորեն զատել և տարբերակել ուսումնասիրվող նյութը՝ կատարելով տրամաբանված ճիշտ եզրահանգումներ:

Եվ վերջապես, ատենախոսության կարևորագույն արժանիք է նաև այն, որ թեման իրոք ենթարկվել է պատմաքննական, համեմատական և համադրական վերլուծության, որը լիովին ապահովել է ատենախոսության գիտականությունը: Այս ամենում, անշուշտ, պարզորոշ երևում է նաև ատենախոս Գևորգ Նազարյանի գիտական ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Հայկունու մասնագիտական փորձառու ձեռքն ու ստեղծագործական մոտեցումը:

Անշուշտ կատարվել է մանրակրկիտ, հիմնարար, քրտնաջան ու հույժ գիտական աշխատանք, որ միանշանակ արժանի է դրվատանքի: Միանշանակ բարձր գնահատելով Գևորգ Պարգևի Նազարյանի ատենախոսությունը, այսուհանդերձ կցանկանայինք ներկայացնել մի քանի առաջարկություններ, որոնց դիտարկումն ու հնարավոր կիրառումը, մեր կարծիքով, ավելի շահեկան կդարձներ ատենախոսությունը:

1. Ատենախոսության ««Միացյալ Հայաստանի» հայկական, ամերիկյան ու բրիտանական նախագծերը Փարիզի խաղաղության վեհաժողովում և դրանց շուրջ տեղի ունեցած զարգացումները» վերտառությամբ վերնագիրն ավելի ճիշտ կլիներ ավարտել «... վեհաժողովում» բառից հետո, քանի որ մնացած «...և դրանց շուրջ տեղի ունեցած զարգացումները» հատվածն ավելի շատ վերլուծական բնույթ ու հարցադրում է պարունակում և պատշաճ ձևով ներկայացված է շարադրանքի տեքստային հատվածում:

2. Հեղինակը ամբողջական չի մենկաբանել 1919 թ. մայիսի 28-ի «Միացյալ և Անկախ Հայաստանի» հռչակագրի վերաբերյալ հնչեցված առանցքային մոտեցումները: Այդ հռչակագիրը հայկական զույգ պատվիրակությունների կողմից Փարիզի խաղաղության վերաժողովին ներկայացված հայկական պահանջների վերաբերյալ հուշագրի տրամաբանական շարունակություն կարելի է դիտարկել: Պատահական չէ, որ հեղինակն ինքն էլ Միացյալ Հայաստանի մասին հուշագրի մասին խոսելիս անդրադառնում է ՀՀ կառավարության ընդունած այդ հռչակագրին:

3. Կարծում ենք, որ ճիշտ կլիներ նաև, եթե ատենախոսը առանձին մեկնաբաներ Միացյալ Հայաստանի վարչապետի հավակնություններ ունեցող Պողոս Նուբարի այն մոտեցումը, որ նա վերջնագրի տեսքով ներկայացրեց ՀՀ Փարիզի պատվիրակությանը:

4. Համակարգված չեն գրականության ցանկի անգլիական և ամերիկյան արխիվային վավերագրերի ցուցիչները: Հավանաբար, դրանք ուղղակի copy paste են արվել տեքստային հղումներից և դրվել գրականության ցանկի մեջ, ինչի արդյունքում արխիվային ֆոնդերը և ցուցակները հաճախակի կրկնվում են:

5. Ատենախոսությունն էլ ավելի շահեկան, փաստարկված ու հիմնավոր բնույթ կունենար, եթե հեղինակը ծանոթ լիներ ստորև ներկայացվող մասնագիտական հրապարակումներին:

ա) **Ազգային պատվիրակության գործունեությունը 1915-1916 (վավերագրեր)**, Լիբանան, 2017:

բ) **Գանգրունի Հրանդ**, *Դաշնագիրները Դաւեցին Հայոց 1918-1923 թթ.*, Պեյրութ, 1992:

գ) **Գալոյան Գ.**, *Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ.*, Երևան, 1999:

դ) **Արզումանյան Մ.**, *Դարավոր գոյամարտ*, Երևան, 1989:

ե) **Р. Ованнесян**, *Соединенные Штаты и Армения, мандат, границы 1920 г.*, «ՊԲՀ», 1997, N 2:

զ) **Ս. Պողոսյան**, *Պողոս Նուբար փաշա, Ազգային գործիչներ*, Երևան, 2004:

է) **Սիմոն Վրացյան**, Բանակցութիւններ Ազգային պատուիրակութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջև, Պոսթրն, 1920:

ը) **Արարատ Հակոբյան**, *Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը Հայոց պատմության հոլովույթում*, Երևան, 2020:

6. Հավանաբար թվական անճշտություն կա էջ 76-ում: Սեմպլի ծրագրի համաձայն հայկական պետությունը, որը պետք է իր մեջ ներառեր Սև ծովի ափեզրը և Կիլիկիան՝ պետք է ունենար 70.000 քառ. մղ. տարածք: Ապագա պետության սահմանների ձգվածությունից պարզ

երևում է, որ այդ թիվը չի համապատասխանում իրականությանը և քիչ է ներկայացված: Քանի որ, եթե հաշվի առնենք փաստահավաք խմբի մեկ այլ զեկույց (էջ 81)՝ ապագա Հայաստանի տարածքն առանց Արևելյան Հայաստանի պետք է կազմեր 210.000 քառ.կմ:

7. Աշխատանքում տեղ են գտել լեզվական և տեխնիկական որոշ սխալներ ու բացթողումներ:

Այսուհանդերձ, արված առաջարկներն ու նկատառումները զուտ խոհրդատվական բնույթ ունեն և ոչնչով չեն ստվերում կամ նսեմասնում կատարված խորը և հիմնարար աշխատանքը: Ատենախոսության սեղմագիրն ամբողջությամբ ներկայացնում է աշխատանքի ամփոփ և համառոտ շարադրանքը:

Ուստի Է.00.01. «Հայոց պատմություն» մասնագիտությամբ, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացվող Գևորգ Պարգևի Նազարյանի՝ ««Միացյալ Հայաստանի» հայկական, ամերիկյան ու բրիտանական նախագծերը Փարիզի խաղաղության վեհաժողովում և դրանց շուրջ տեղի ունեցած զարգացումները» ատենախոսությունը համապատասխանում է ԲՈԿ-ի թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, և հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը հաստատված է ամբիոնի 2021թ. ապրիլի 16-ի նիստում /արձանագրություն թիվ 8/:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության
ամբիոնի վարիչ՝ պրոֆ. Ա. Փիլիպոսյան

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Փիլիպոսյանի
ստորագրությունը հաստատում եմ:
ՀՊՄՀ գիտ. բաժնի դոց. Մ. Իսպիրյան

16.04.2021թ.